ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ա. Մանուկյան /________/

«___» 09 2022թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**Կոտայքի մարզի Արզնիի Ս. Սարխոշևի անվան միջնակարգ դպրոց**

**Դասարան՝ IXբ**

**Դասղեկ՝ Մ. Սարուխանյան**

**«2022-2023թ» ուստարի**

## Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

## Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը)

**9րդ դասարանը բաղկացած է 33 աշակերտներից՝ 16 աղջիկ, 17 տղա:Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն միջին ընդունակություններ:Ունենք 1 գերազանց աշակերտ( Ի. Զալավյան)։Դասարանում կա երկտարեցի 2 աշակերտներ(Ք. Ալիյան, Տ. Նադոյան)։**
**Դասարանի աշակերտները համախմբված են , աշխույժ, պատրաստակամ , ցուցաբերում են ակտիվություն:**
**Աշակերտները դպրոց են հաճախում ճիշտ ժամանակին և ցուցաբերում ակտիվություն դասերի ժամին: Բոլոր աշակերտները սպահովված են դասագրքերով ։**

## Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

2022-2023ուստարվա ընթացքում ուսումնադաստիարակչական
Նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և առաջադիմությանը:Թույլ և միջին առաջադիմության տեր աշակերտների հետ աշխատել առանձին, որպեսզի շտկել այդ թերությունները(դասի և վարքի)։
Աշակերտների մեջ ձևավորել բազմակողմանի կարողություններ և գիտելիքներ(կարգապահություն, անձնական հիգենա, համագործակցություն)։
Հետևել աշակերտները դասի ներկայանան պատրաստ, կոկիկ ։
Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների կարգապահության և առաջադիմության բարձրացմանը. Սերտացնել ծնող-դասղեկ-աշակերտ կապը:
Կազմակերպել դասղեկի ժամեր, անցկացնել քննարկումներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ, որոնք կունենան ուսուցողական բնույթ:

Հայեցի դաստիարակություն:Յոգևոր դաստիարակություն
Աշակերտներին հնարավորություն տալ ծանոթանալու իրենց հոգևոր և կրոնական ժառանգությանը՝կազմակերպելով ինտերակտիվ հոգևոր զրույցներ:
Խթանել երեխաներին զգալու իրենց հոգևոր արժեքները անմիջապես մասնակցություն ունենալով ։
Գեղագիտականդաստիարակությունը

Աշակերտներին հնարավորություն տալ արվեստի և գեղեցիկի մասին, գեղեցիկը ճանաչելու, նկատելու և գնահատելու կարողություններ,գեղեցիկի պահանջմունքի և գեղագիտական ճաշակի բացահայտում, ազգային տոների, ծեսերի միջոցով բարձրացնել գեղագիտական ճաշակը։

Ռազմահայրենասիրականդաստիարակությունը

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը և գրագետ , հոգեպես ու ֆիզիկապես կոփված , բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթացը օրեցօր ավելի կատարելագործել։

Ֆիզիկականդաստիարակությունը

Ֆիզիկական դաստիարակության գործընթացը ուղղված է առողջության ամրապնդմանն ու պահպանմանը, մարդու մտավոր և ֆիզիկական կարողությունների զարգացմանը։Ֆիզկուլտուրան նպատակ ունի ամրապնդել առողջությունը, իսկ սպորտը՝ հասնել սպորտային պարգևների։

Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակությունը դիտարկվում է որպես երիտասարդ սերնդին հասարակական արտադրության մասնակից դարձնելու գործնական նախապատրաստում,միևնույն ժամանակ բարոյական , մտավոր, գեղագիտական դաստիարակության կարևոր տարր։

Բնապահպանական դաստիարակություն

Բնապահպանական դաստիարակության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, վերլուծել և կարևորել բնապահպանական արժեքները, շահերն ու կարիքները, բնապահպանական դիտարկումները։

Դպրոց – ընտանիք   կապը

Երեխաները պետք է հասկանան ,որընտանիքը հանդիսանում է պետության հիմքը: Միևնույն ժամանակ պետք է գիտակցեն , որ դպրոց ընտանիք կապը պետք է սերտ լինի , որպեսզի աշակերտները լավ սովորեն , անհրաժեշտ է ծնողների համագործակցությունը ուսուցիչների հետ:Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ , իսկ ընտանիքն էլ իր հերթին ապահովվում է պրակտիկ փորձը:

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | *Ուսումնադաստիարակչական շխատանքների բովանդակությունը* | Կատարմանժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | *Ճանաչենք մեր երկիրը զրույց հայրենիքի , հայրենասիրության, հայրենիքի պաշտպանների մասին* | 07. 09. 2022 | Աշակերտներ,դասղեկ |
| II | *Լավ և վատ սովորույթներ զրույց սովորույթների մասին, նշելով լավ և վատ կողմերը( ամոթ, խիղճ, պատասխանատվության զգացում)* | 14.09.2022 | Աշակերտներ, դասղեկ |
| III | *Էքսկուրսիա դեպի մոտակա հոգևորմշակութային կենտրոն* | | |
| IV | *Արցախյան 44 օրյա պատերազմ* | | |
| V | *Թարգմանչաց տոն* | | |
| VI | *Ինչպե՞ս չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը* | | |
| VII | *Ի՞նչ է պատասխանատվության զգացումը* | | |
| VIII | *Ինչպե՞ս պայքարել անտարբերության դեմ* | | |
| IX | *Մարդու ինքնուրույնությունը* | | |
| X | *Ինչպե՞ս ապացուցել քո ճշմարտացիությունը* | | |
| XI | *Ժպիտը մեր կյանքում* | | |
| XII | *Ձմռան մուտքը մեր դպրոց* | | |
| XIII | *Զրույց և քննարկում երկրաշարժի և այլ բնական աղետների վերաբերյալ* | | |
| XIV | *Իմ երազանքը* | | |
| XV | *Հայտնի մարդկանց կյանքի պատմությունը* | | |
| XVI | *Ի՞նչ գեղեցիկ է աշխարհը* | | |
| XVII | *Սիրում եմ...* | | |
| XVIII | *Բանակի օր* | | |
| XIX | *Հայաստանի զինանշանի և դրոշի պատմությունը* | | |
| XX | *Սուրբ Սարգսի օր:Տյառնընդառաջ* | | |
| XXI | *Քանի լեզու գիտես այնքան մարդ ես* | | |
| XXII | *Գրքի տոն* | | |
| XXIII | *Դժվարություններ, որոնց բախվում եմ* | | |
| XXIV | *Արտագաղթը չարիք է* | | |
| *XXV* | *Ինչպե՞ս հաղթահարել ծուլությունը* | | |
| *XXVI* | *Բարի գործերի և բարության մասին* | | |
| *XXVII* | *Ինչպե՞ս հասնել հաջողության* | | |
| *XXVIII* | *Բարեկամներ և թշնամիներ* | | |
| *XXIX* | *Հայոց Մեծ եղեռնը* | | |
| *XXX* | *Եկեղեցին և ազգ* | | |
| *XXXI* | *Հուզող հարցերի քննարկում* | | |
| *XXXII* | *Սպորտով զբաղվելը նորաձև է , թե՞ առողջության գրավական* | | |
| *XXXIII* | *Իմ առօրյան* | | |
| *XXXIV* | *45 րոպեն մի ակնթարթում* | | |

# ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

| Անցկացմանօրը, ամիսը, տարեթիվը | Քննարկվողօրակարգի հարցերը | Ժողովի համառոտբովանդակությունը | Ծանոթություն |
|---|---|---|---|
| | | | |
| 13.09.2022 | 1. Ծնողական խորհրդի նախագահի և անդամների ընտրություն<br>2. Դասարանի ներքին կարգապահական հարցեր | 1. Ներկայացվեցին թեկնածուներ և կատարվեց ընտրություն(նախագահ և անդամներ):<br>2. Քննարկվեցին ներքին կարգապահական հարցեր | |
| | 3.Դասարանական անկյան ստեղծում | 3.Ստեղծել դասարանական անկյուն | |
| | 4.Կազմակերպչական հարցեր | | |
| | | | |

## ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ  ԿԱԶՄԸ

| | ազգանուն, անուն, հայրանուն |
|---|---|
| Նախագահ | |
| Անդամներ | 1.Մոսեսյան Մարգարիտա<br>2.Գևորգյան Թագուհի<br>3.Ռոստոմյան Թեհմինե |